ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Մ. Բաղրամյան պող. 19, 0095, ք. Երևան Հեռ.՝ + 374 10 529695

Ա/5078-2025
05.12.2025

«ԿԵՏ 33» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ, ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ ԼՐԱԳՐՈՂ
ՊԵՐՃՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Էլ.հասցե՝ gevorgyanperchuhi2@gmail.com
info@point33.am
Հեռ.՝ +374 93 300 428

Հարգելի՛ տիկին Գևորգյան

Ի պատասխան Ձեր՝ սույն թվականի դեկտեմբերի 2-ի հարցմանը՝ հայտնում ենք, որ հարցման իրականացման պահին ՀՀ Ազգային ժողովում աշխատում է 673 անձ, որոնցից 386-ը կանայք են:

Ներկայումս 72 աշխատակից ունի մինչև 3 տարեկան երեխա: Աշխատակիցներից 6-ը ներկայացրել է մայրության համար տրամադրված անաշխատունակության թերթիկ, իսկ 9-ը գտնվում է երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդում: Ելնելով վերոգրյալից՝ 57 աշխատակից ունի մինչև 3 տարեկան երեխա և չի գտնվում երեխայի խնամքի արձակուրդում:

Ներկայումս բացակայում է ընտանիքի անդամի խնամքի համար տրամադրվող արձակուրդում գտնվող աշխատակից:

ԱԺ աշխատակազմի աշխատակիցներից 9-ն այս պահին աշխատում են հեռավար՝ համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 106.1 հոդվածի:

Հայրության արձակուրդի տրամադրումն իրականացվում է համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 171-րդ հոդվածի:

Հարցման 9-րդ կետում նշված պրակտիկան ՀՀ ԱԺ աշխատակազմի կողմից չի իրականացվում:

Հարցման 10-րդ կետի վերաբերյալ հայտնում ենք, որ կրծքով կերակրելու սենյակ և/կամ խաղասենյակ բացակայում է ՀՀ ԱԺ շինության տարածքում, սակայն աշխատակիցներն ունեն առանձին աշխատասենյակներ:

Հարցման 11-րդ կետի վերաբերյալ հայտնում ենք, որ ԱԺ աշխատակազմն իրականացնում է վերապատրաստումների և առողջության ապահովագրության ծրագրեր:

ԱԺ աշխատակազմը ընտանիքամետ քաղաքականությունների արդյունավետության գնահատում չի իրականացնում, սակայն վերոգրյալ ծրագրերի իրականացումը միտված է

աշխատակիցների հոգեկան և ֆիզիկական բարեկեցությանը, կարիերայի զարգացմանն օժանդակելուն:

Ստորագրող՝
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ
1202930629

2025-12-05 13:04
Հավաստված է Է

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Տիգրան Հակոբյան
ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավարի օգնական
Հեռ՝ 011513252
Էլ. փոստ՝ tigran.hakobyan@parliament.am